ՀՊԱՐՏ ԵՆՔ, ԲԱՅՑ՝ ՅՈՒՍԱԽԱԲ

Ռուբինա Փիրումեան

Պատմագիտութեան դոկտոր

Հատուած՝ Անկախութեան Օրուան ելոյթէն - Մոնթրէալի Հայ կեդրոն, 28 Մայիս 1995

Այսօր անկախ է Հայաստանը, իր անկախութիւնն է յայտարարել նաեւ Արցախը: Ու մենք հպարտ ենք մեր հայրենիքով. հպարտ ենք մեր ժողովրդի տոկուն կեցուածքով, արցախեան իշխանութիւնների որդեգրած ազգային ուրոյն վարքագծով: Հպարտ ենք Հայաստանի Եռագոյն դրօշով, որ այնքան փառահեղ ծածանւում է Մ.Ա.Կ.ի մուտքին:

Հպարտ ենք, բայց՝ յուսախաբ:

Ի՞նչ եղաւ այս վերջին տարիներին: Չէ՞ որ մեր երազած անկախ Հայաստանը պիտի լինէր հայրենիքը համայն հայութեան: Չէ՞ որ Հայաստանի իշխանութիւնները պիտի իրագործէին մարդկութեան ամենահիդէալական վարչակարգը՝ հիմնուած ժողովրդավարութեան վրայ, արդարութեան, հաւասարութեան, ազատ խօսքի իրաւունքի վրայ:

Այսօր դարձեալ հաւաքուած տօնակատարում ենք Մայիս 28ը: Ու եթէ մինչեւ մի քանի տարի առաջ այսպիսի տօնակատարութիւններին ցաւ էինք յայտնում, որ կորցրել ենք մեր հայրենիքի անկախութիւնը եւ երդւում էինք պայքարել մինչեւ նոր Մայիս 28ի ստեղծում, եթէ վերջին տարիներին հաստատում էինք, որ Մայիս 28ի գաղափարը վերընձիւղուել է նորանկախ Հայաստանի մէջ եւ խոստանում էինք մեր կարելին անել նրա պետականութեան ամրակայման, բարգաւաճման ու ընդլայնման ճամբին, այսօր կանգնել ենք թեւաթափ, վերջին ամիսների իրադարձութիւնների ծանր տպաւորութիւններով, ու փորձում ենք նոր իմաստ գտնել:

Հայաստանի իշխանաւորները ո՞ւր են տանում Հայաստանն ու հայ ժողովուրդը: Այս ի՞նչ անարդար ու անտեղի ամբաստանութիւն ու հալածանք է շղթայազերծուել մի կուսակցութեան դէմ, որի անշեղ ազգային գիծը, որի գաղափարական անխառն մաքրութիւնը իր 105 տարուայ պատմութեան մէջ 105 անգամ փորձաքարի է զարնուել ու 105 անգամ վեր է յառնել լուսաճակատ:

Հայաստանի այս ճակատագրական օրերին, երբ մեր հայրենիքի ապագան պիտի ձեւաւորուի, երբ Հայաստանը կարող է բռնատիրութեան կամ ժողովրդավարութեան ճամբան բռնել, տնտեսական եւ քաղաքական կախեալութեան գնալ կամ դէպի լիիրաւ անկախութիւն քայլել, ինչո՞ւ փակել ընտրանքի ճամբան, խլել ժողովրդից առողջ ու անարգել դատողութեան հնարաւորութիւնը:

Ու դեռ հալածանքով, արգելափակումով, բանտարկութեամբ ու չարչարանքով շրջապատուած՝ նախագահը ակադեմականի երեւոյթով - ես կ'ասէի միայն խակ ու պատեհապաշտ պատմաբանին վայել - մեկնաբանութիւններ է կատարում ու Դաշնակցութեան պատմութեան ու գործելակերպի վրայ սեւ բիծեր նետում:

Դէպքերի այս դասաւորութիւնը ո՞ր օտար իշխանաւորների ու հայազգի հակառակորդների դէմքին է գոհունակութեան ժպիտ գծագրում:

Կ'արժե՞ն այս բոլորը:

Կարելի՞ է միթէ իշխանութեան մոլուցքով տարուած Հայաստանի ապագան գրաւ դնել, խաղաքարտի վերածել ու ամբողջ գաղափարի վրայ բանակցութեան նստել: Եւ դեռ ազգադաւ յանցագործութիւններ «դրսեւորել» ու միասնականութիւնից խօսել, հայ ժողովրդի է՛ն միամիտ խաւը, քաղաքական է՛ն տրհաս տարրը խաբէութեան մատնել:

Այսօր Մայիսի 28 ենք տօնակատարում, հէնց Խորհրդային Հայաստանի վերջին իշխանութեան հաստատումով՝ օրը հայկական պետականութեան վերականգնման: Երեւանում շքերթներ տեղի ունենա՞լո՞ւ են: Չգիտեմ: Գիտեմ միայն, որ Վանօ Սիրադեղեանը շնամարտ է կազմակերպել: Իսկ Սփիւռքում դարձեալ մենք ենք ու մենք: Մենք ենք՝ հպարտ մեր շարքերով: Ո՛չ, զոհի հոգեբանութիւնը մեզ չի վայելի. Դաշնակցութիւնը եւ նրան հետեւող ժողովուրդը երբեք գլխիկոր չեն ներկայացել պատմութեան առջեւ: հալածանքը մեզ զօրացրել է, նոյնիսկ եթէ դա մեր ազգակիցներից է եկել:

Այսօր էլ, այս հանդիսութեամբ թող նորոգուի մեր ուխտը՝ պայքարելու մինչեւ մեր նպատակների իրագործում, մինչեւ իրագործումը Ազա՛տ, Անկա՛խ եւ Միացեա՛լ Հայաստանի - եւ շեշտս դնում եմ ամէն մէկ բառի վրայ իր լիակատար իմաստով.

Եւ թող մեր այս ուխտի վկաները լինեն հայրենիքի ազատութեան ճամբին ընկած, Մայիս 28ը կերտած հերոսները ոգեղինացած, թող մեր այս ուխտի վկաները լինեն երկիր Արցախի ազատութեան համար կռուող ու այսօր Հայաստանից դուրս շպրտուած կամ Երեւանի բանտերում չարչարանքի ու խոշտանգումի ենթարկուած մեր նոր հերոսները:

Թող այս տարի Մայիս 28ի խորհուրդը հնչի աւելի կուռ. խորհուրդը՝ որ մեր կամքն է իբրեւ ազգ ապրելու ու յարատեւելու. խորհուրդը՝ որ մեր վճռականութիւնն է միասնական ու հաւաքական պայքարի՝ մինչեւ յաղթանա՛կ:

■